DOI: 10.54503/1829-4324.2024.1-153

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԸ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Շողեր Պյոտրի Պողոսյան

Հոդվածը ստացվել է՝ 12.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 17.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Ընդհանուր առմամբ միգրացիան բնակչության տարածական տեղաշարժն է: Վերջին տարիներին ի հայտ են եկել միգրացիոն գործընթացների դրսևորման բազմաթիվ նոր ձևեր, որոնք առաջանում են միգրացիայի ավանդական ձևերի միահյուսման արդյունքում: Միաժամանակ, նոր ձևերի հետ մեկտեղ շարունակում են գոյություն ունենալ հները:

Թվային փոխակերպումները որպես տեղեկատվական դարաշրջանի արտահայտություն բնութագրվում է սոցիալական ցանցերում միգրանտների զանգվածային ներկայացվածությամբ, նրանց տեղեկատվական ինքնաներկայացմամբ և ինքնահիրացմամբ, ինչպես նաև սահմաններ չունեցող տեղեկատվական տարածքներում միգրանտների սոցիալական հարմարվողականության նոր ձևերի մշակմամբ[1]:

Ընդունող հասարակությունում միգրանտների դրսևորման և դիրքավորման գերակշռող ձևը դառնում է միգրանտների թվային վիրտուալ հաղորդակցությունը ինչպես իրենց, այնպես էլ հասարակության և սոցիալական ու պետական ինստիտուտների միջև: Սա արտահայտվում է միգրանտների վիրտուալ ցանցային համայնքների ստեղծմամբ, միգրանտների «թվային սփյուռքների» ձևավորմամբ, որոնցում տեղի է ունենում միգրանտների թվային ադապտացիա և ձևավորվում նրանց վիրտուալ ինքնությունը, ինչը թույլ է տալիս բնութագրել նրանց որպես «թվային միգրանտներ»: Այս միտումները առաջացնում են սոցիալական նոր հիմնախնդիրներ, որոնք արտահայտվում են միգրացիոն գործընթացներում:

Հասարակության թվայնացման ինտենսիվ գործընթացները, որոնք թույլ են տալիս խոսել նոր թվային դարաշրջանի սկզբի մասին, էական ազդեցություն ունեն ժամանակակից հասարակության կառուցվածքների, նրա կազմակերպչական ձևերի և գործընթացների վրա: Միգրացիան՝ որպես ձևավորվող նոր սոցիալական ինստիտուտ, որը ազդում է սոցիալական կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա, վերափոխվում է թվայնացման ազդեցության տակ[2]: Սա ծնում է

---

[1] Волков Ю.Г., Кривопусков В.В., Курбатов В.И. Цифровые мигранты и цифровая диаспора: новые проблемы и тренды международной миграции. *Цифровая социология/Digital Sociology*. 2021;4(4):102-108. https://doi.org/10.26425/2658-347X-2021-4-4-102-108

[2] Olga B. Skorodumova, Ibragim M. Melikov & Rufat S. Tabasaranskiy «Problems of Migration Management in the Conditions of Global Digitalization of Society» International Conference on Electronic Governance

միգրացիայի կառավարման գործընթացներում փոփոխությունների և նորարարությունների վերլուծության անհրաժեշտություն, ինչն էլ պայմանավորում է մեր ***հետազոտության արդիականությունը:***

Հետազոտության ***նպատակն է*** ուսումնասիրել՝ թվայնացման հետևանքները միգրացիայի կազմակերպչական ձևերի և միգրացիայի կառավարման գործընթացների վրա: Հետազոտության ***խնդիրն է*** ուսումնասիրել **միգրացիոն հոսքերը թվային փոխակերպումների համատեքստում** , միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարումը, վերլուծումը և համեմատումը:

Գրականության վերլուծություն: Չնայած այն հանգամանքին միգրացիայի ձևերը ժամանակի հետ փոխվում են տնտեսագիտության առաջ բացելով նոր ուսումնասիրության շրջանակ, այն որպես երևույթ գոյություն է ունեցել վաղուց և կրել է տարերային բնույթ՝աստիճանաբար արժանանալով կառավարությունների ուշադրությանը՝ այն դարձել է օրենքով կարգավորվող գործընթաց: Թվային դարաշրջանում ի հայտ են եկել միգրացիոն գործընթացների նոր հասկացություններ «էլեկտրոնային սփյուռք», «միջնորդավորված միգրանտներ», փախստականների «տեղեկատվական անկայունություն», «թվային սփյուռք», «խելացի փախստականները», «թվային արտաքսումը» և միգրանտների «պոլիմեդիան», որոնք պահանջում են ի հայտ եկած նոր ձևերի հետազոտության անհրաժեշտություն[1]:

«Փախստականի քաղաք, թե՞ թվային կարգ. Փախստականների ճանաչումը և միգրացիայի թվային կառավարումը քաղաքում» Մ. Գեորգիուն վերլուծում է ապաստան քաղաքի թվային կառավարումը: Ելնելով Աթենքում, Բեռլինում և Լոնդոնում իրականացված բազմակողմ ուսումնասիրությունից՝ հեղինակը հոդվածում անդրադարձել է թվային կառավարման և քաղաքային արդարադատության խնդիրներին: Օգտագործելով բազմամեթոդ որակական մոտեցում՝ ուսումնասիրությունը կենտրոնանում է փախստականների և գործող քաղաքային թվային կարգի վրա, որը մեծացնում է ճանաչման հնարավորությունները, ինչպես նաև միգրանտին (փախստականին) պարտադրում է որպես քաղաքացի լինելու և գործելու ըստ սահմանված ձևերի[2]:

Առցանց հարթակները միգրանտների համար ունեն մեծ նշանակություն: Բորտալո Ֆուենտեսը անհատների երևակայական համայնք անկաշկանդ կապակցված («Caminata del Migrante post») հարթակի օգնությամբ կարողացավ

---

and Open Society: Challenges in Eurasia EGOSE 2021: Electronic Governance and Open Society: Challenges in Eurasia pp 174–185, https://link.springer.com/chapter/10.1007/978-3-031-04238-6_14

[1] Leurs K., Prabhakar M., Doing Digital Migration Studies: Methodological Considerations for an Emerging Research Focus, Chapter 14, 2018 https://library.oapen.org/bitstream/handle/20.500.12657/29754/10.1007_978-3-319-76861-8.pdf#page=253

«Պոլիմեդիա» (Madianou & Miller, 2012) - անդրազգային ընտանեկան հարաբերությունների նպատակով ինչպես է ինտերնետը միջնորդում առօրյա կյանքում և կազմում տնային տեխնոլոգիաների մաս:

[2] Georgiou Myria. 2019. “City of Refuge or Digital Order? Refugee Recognition and the Digital Governmentality of Migration in the City”. *Television & New Media*, 20 (6): 600–616.

միավորել միգրացիոն գործընթացը այն դիտելով որպես ամբողջական խումբ՝ միավորել ընդհանուր շահերը՝ ի տարբերություն նախկին կապերի: Առցանց հարթակը ցույց է տալիս, թե ինչպես իրական համայնքները կարող են և արմատավորվում են ինտերնետի վրա հիմնված տարածքում[1]:

Հայաստանը, կովկասյան և մերձավոր արևելյան տարածաշրջանների հարևան պետությունները, գտնվում են բնածին ու մարդածին աղետների, ինչպես նաև զինված հակամարտությունների տեսանկյունից ռիսկային տարածաշրջանում: Մերձավոր Արևելքի երկրներում զարգացումների փորձագիտական գնահատականները կանխատեսում են ճգնաժամերի և հակամարտությունների խորացմամբ պայմանավորված՝ մարդկանց զանգվածային տեղաշարժի մեծ ռիսկ: Հաշվի առնելով հատկապես այդ երկրներում հայկական սփյուռքի առկայությունը՝ Հայաստանը կարող է բախվել հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ընդունման խնդրին[2]: Եվ այս առումով թվային գործիքակազմով կառավարումը մոտ ապագայում դառնալու է անխուսափելի:

Միգրանտների ցանցերը ստեղծում են շոշափելի սոցիալական կապիտալ, ինչպես նաև հնարավոր ռեսուրսների կուտակում, ներառյալ կապեր, կամուրջներ այն մարդկանց հետ, ովքեր ունեն նույն մշակույթի, էթնիկ պատկանելության կամ ինքնության զգացումը: Սոցիալական կապիտալը նպաստում է համերաշխությանը, վստահությանը, համագործակցությանը և նվազեցնում է միգրացիայի հետ կապված ռիսկերը, քանի որ սոցիալական կապիտալը թուլացնում է անհատական վախերը և մեղմացնում միգրացիայի հոգեբանական և սոցիալական ծախսերը, այն ավելի նպաստավոր է դարձնում հուսահատ պայմաններից փախչող մարդկանց՝ անցնելու անդրազգային միգրացիայի դժվարին ուղին[3]:

Մեթոդաբանություն: Հետազոտության իրականացման համար հիմք են հանդիսացել միջազգային հրապարակումները, ինչպիսիք են «Միգրացիայի համաշխարհային զեկույց 2022»-ը, ՄԱԿ-ի «Թվային փոխկախվածության դարաշրջանը» վերլուծական զեկույցները, ինչպես նաև փորձագետների՝ ոլորտին առնչվող գիտական հոդվածները, ինչպես նաև պատմական, նկարագրական, վերլուծական, վիճակագրական և համեմատական, մեթոդների օգտագործումը:

Վերլուծություն: 21-րդ դարի սկզբին հասարակությունը մուտք գործեց նոր քաղաքակրթության, որը կարելի է անվանել «կյանքի որակի փոփոխություն»: Շրջանառության մեջ են մտնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են

---

[1]Cappelli, M. (2020) Digital Mobilization and Politicization of *El Caminata del Migrante*. *Social Networking*, 9, 11-37. doi: 10.4236/sn.2020.92002.
https://www.scirp.org/journal/paperinformation?paperid=101734

[2]Հայեցակարգ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 801-Լ որոշման, https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909

[3] Alencar A., Refugee Integration and Social Media. A Local and Experiential Perspective. Information, Communication and Society, 2017, 21, 1588-1603.

«արժանապատիվ կյանք», «կյանքի որակ»[1]: Ժամանակակից հասարակության կենսագործունեության վրա էական ազդեցություն են թողնում տնտեսության գլոբալացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացումը, մարդկային, սոցիալական կապիտալի գիտական գիտելիքների վերածումը համաշխարհային զարգացման գործոնի, հասարակության վերաբերմունքի փոփոխությունը մարդու և տեխնիկայի նկատմամբ, գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումը: Այսպիսի քաղաքակրթության ձևավորման ընթացքում փոխվում են պատկերացումները հասարակության զարգացման շարժիչ ուժերի մասին: Միգրացիոն նոր հոսքերն ու գործընթացները առաջ են բերում «կյանքի նոր որակի» հիմնախնդիրների նոր մեկնաբանություններ՝ արագ անցում սաստիկ խոցելիությունից դեպի դիմացկուն անհատականություն:

Համաձայն «Համաշխարհային անհավասարության զեկույցի» ("Global Inequality Report") 2022թ. Աշխարհի բնակչության ամենահարուստ 10%-ին է պատկանում աշխարհի եկամտի ավելի քան 50%-ը, մինչդեռ ամենացածր եկամուտ ունեցող խմբին, որը կազմում է բնակչության մոտ 50%-ը, պատկանում է համաշխարհային հարստության միայն 2%-ը[2]:

Աշխատանքային միգրացիան գոյություն ունի և զարգանում է որպես բազմաչափ ամբողջություն՝ դրսևորվելով տարբեր ձևերով: Աշխատանքային միգրացիայի բոլոր ձևերը փոխկապակցված են և լրացնում են միմյանց, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել աշխատանքային միգրացիայի բազմաչափ բնույթը: Աշխատանքային միգրացիայի թվային փոխակերպումը առավել հստակ դրսևորվում է ժամանակակից պայմաններում՝ թվային գլոբալիզացիայի ժամանակաշրջանում: Ներկայումս աշխատաշուկան առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում տնտեսության ամենահեռանկարային ոլորտներում զբաղված բարձր որակավորում ունեցող աշխատողների համար: Այս միտումն արտահայտվում է միջազգային միգրացիայի փոփոխվող կառուցվածքում, որի զգալի մասնաբաժինը կազմում են բարձր որակավորում ունեցող մասնագետները[3]:

ՀՀ միգրացիոն հոսքերում գերակշռում են աշխատանքային միգրանտները: Ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության տվյալների, Հայաստանում կա ավելի քան 190 հազար միգրանտ, որը ընդհանուր բնակչության 6,5%-ն է[4]: Վերջին շրջանում ակտիվ ներհոսք ունենք Հնդկաստանից և Իրանից: 2021թ. հանրապետություն է ժամանել Հնդկաստանի 22 197 քաղաքացի, իսկ 2022-ին՝ 22 979,

---

[1] Субетто А. И. Государственная политика качества высшего образования: концепция, механизмы, перспективы, СПб, Кострома: КГУ им. Н. А. Некрасова, Смольный университет РАО, Изд-во «Астерион», 2004., 136с, 11-13

[2] Основной доклад по глобальной миграции 2022, 42С., стр. 6

[3]Черевичко Т. В., Миграция труда в контексте цифровой экономики, Вестник СГСЭУ. 2019. № 4 (78), ISSN 1994-5094, стр 91

[4]Շահրիմանյան Թ., Հայաստանի աշխատաշուկայի էթնիկ կազմի «վայրիվերումները», Ամբերդ 2023/4, էջ 52-60, https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/6.pdf

Իրանից 2021թ-ին՝ 108 902, իսկ 2022թ-ին՝ 134 538[1]: Ներգաղթի նմանատիպ աճը Հնդկաստանից, ոլորտի մասնագետները բացատրում են քաղաքացիների միակողմանի պարզեցված վիզային ռեժիմով:

«Ամունդի-Ակբա»-ի երկրորդ տնտեսական համաժողովում ներկայացվեց, որ ՀՀ աշխատուժի շուկայում աշխատավարձերի էական աճ է նկատվել՝ շուրջ 10%, աճը պահպանվել է 2023 թվականին նույնպես: Գնաճի նվազման տեսանկյունից ամենակարևոր փոփոխություններից մեկը Հնդկաստանից մեծ քանակությամբ աշխատողների ներհոսքն է: Կանխատեսվում է, որ ՀՀ-ում աշխատավարձերը նվազեցնելու միտում կնկատվի և կունենանք ավելի ցածր աշխատավարձերով մեծ քանակությամբ աշխատուժի ներհոսք: Աշխատաշուկայում մասնագետների բացը լրացնելու համար տեղական SS ընկերությունները վարձում են օտարերկրյա մասնագետների, մասնավորապես Հնդկաստանից և Իրանից[2]: 2022-2023թթ. դրությամբ՝ Հնդկաստանի քաղաքացիների հոսքի զգալի մասը ստացել են ՀՀ-ում օրինական ինչպես բնակության, այնպես էլ միայն աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ:

2023թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ տարածքային կենտրոնում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 65.2 հազար մարդ[3]:

ՀՀ-ում արտագաղթը մի կողմից խթանող, մյուս կողմից սահմանափակող ազդեցություն ունի: Խթանող է այն առումով որ մեծ է ՀՀ-ի և զարգացած աշխարհի միջև եկամտային տարբերությունը: Սահմանափակող որովհետև չքավոր խավը չի բավարարում զարգացած երկրների կողմից միգրանտներին ներկայացվող՝ մարդկային կապիտալի և նյութական բարեկեցության պահանջներին: Բնակչության հարուստ խավը ավելի քիչ է հակված միգրացիոն տեղաշարժի, քան միջին խավը:

Հետազոտությունները փաստում են, որ զարգացած տնտեսություններում ներգաղթյալները մեծացնում են արտադրանքը և արտադրողականությունը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հեռանկարում: Մասնավորապես, ներգաղթյալների ներհոսքի մեկ տոկոսային կետով աճը ընդհանուր զբաղվածության համեմատ ավելացնում է արտադրանքը գրեթե մեկ տոկոսային կետով հինգերորդ տարում[4]: Քանի որ հայրենի և ներգաղթյալ աշխատողներն աշխատաշուկա են բերում տարբեր հմտություններ, որոնք լրացնում են միմյանց

---

[1] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2023, էջ 157, https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf

[2] Աշխատաշուկայի անհամապատասխանության եւ հմտությունների բացերի քարտեզագրման ելակետային հետազոտություն, Հայաստան, 2022, 80էջ, էջ33

[3] Հայաստանի Հանրապետություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, https://www.socservice.am/multilevel/ashkhatashvoukayi-iravitchaky-hayastani-hanrapetvouthyvounvoum

[4] Engler Philipp, MacDonald Margaux, Piazza Roberto, Sher Galen, Migration to Advanced Economies Can Raise Growth, 2020, https://www.imf.org/ru/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth

և բարձրացնում արտադրողականությունը: Ավելին, նույնիսկ ներգաղթից ստացված արտադրողականության փոքր ձեռքբերումները մեծացնում են տեղական բնակչության միջին եկամուտը: Սակայն փախստականների ներգաղթի դեպքում դեպի զարգացող շուկաներ և զարգացող երկրներ արտադրողականության աճի նման դրական ազդեցություն չի նկատվում: Դա պայմանավորված է այն դժվարություններով, որոնք այս միգրանտները զգում են տեղական աշխատաշուկաներին ինտեգրվելու հարցում:

Թվային հարթակները թույլ են տալիս միասնական հարթակների միջոցով ավելի հեշտացնել միգրանտների ինտեգրման գործընթացը: Միասնական հարթակի վառ օրինակ է https://workpermit.am/ հարթակը: 2022թ-ի հունվարի 1-ից ՀՀ-ում գործարկվեց սույն միասնական հարթակը, որը կոչված է օտարերկրացի աշխատողների ընտրության գործընթացը ամբողջությամբ էլեկտրոնային տարբերակով իրականացնելուն[1]:

Տարբեր երկրներում միգրանտների առանձին խմբերի առնչությամբ կազմակերպված գոյություն ունեցող ուսումնասիրությունները ցույց են տալիս առցանց ռեսուրսների կարևորությունը նոր երկրում միգրանտների փորձի ձևավորման, ծագման երկրի հետ կապերի պահպանման, նրանց ինքնության ձևավորման, ընդունող հասարակության մեջ ներառման, և առօրյա խնդիրների լուծման համար[2]:

Միգրացիայի կառավարման ոլորտում գործածվող անհրաժեշտ թվային նորարարական տեխնոլոգիաների տեսակները, ինչպիսիք են՝ արհեստական բանականությունը, ռեեստրի համակարգերը, մեծ տվյալների վերլուծության տեխնոլոգիաները, ամպային ծառայությունները, սոցիալական կայքերը, անլար կապի տեխնոլոգիաները թվային նույնականացման, ներառյալ կենսաչափական անձնական տվյալների վրա հիմնված տեխնոլոգիաները կարող են նպաստել կառավարությանը միգրացիոն գործընթացների կառավարման ուղիների բարելավմանը: Միգրացիոն գործընթացների կառավարման մեջ թվային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը հնարավոր է միայն միգրացիոն պետական քաղաքականություն իրականացնող պետական մարմինների ամենօրյա գործունեության մեջ դրանց իրականացման օրենսդրական հիմքերի առկայության դեպքում:

«ՀՀ միգրացիոն քաղաքականության ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման» 2021-2031թթ ռազմավարության մեջ սահմանված է

---

[1] https://workpermit.am/Կայքը օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության էլեկտրոնային համակարգ է, որը օտարերկրացի աշխատակից վարձել ցանկացող գործատուին հնարավորություն է տալիս ամբողջությամբ առցանց ռեժիմով իրականացնել աշխատանքի գրանցումն ու վարձել ցանկացած թեկնածուին՝ փաստաթղթավորելով վերջինիս սահմանված ընթացակարգով:

[2] Трегубова Н.Д., Иванова А.А., Радикализация мигрантов и экстремистский потенциал онлайн-ресурсов: Сравнительный анализ сетевых пространств взаимодействий мигрантов из стран СНГ в России, Коммуникации. Медиа. Дизайн, Том 5, №3, 2020, 145-167, стр. 148

զանգվածային միգրացիոն հոսքերի կառավարումը որպես Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կարևոր ուղղություններից մեկը:

Անկախության հռչակումից հետո առաջին իսկ տարիներին բախվելով փախստականների զանգվածային հոսքի կառավարման խնդրին, Հայաստանը հիմնեց նորաստեղծ Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ հիմքում դնելով փախստականների պաշտպանությանը: Աստիճանաբար ՀՀ միգրացիոն հոսքերը դրսևորվեցին զանգվածային արտագաղթով, աշխատանքային ու կրթական միգրացիայով, Հայաստանի Հանրապետության վերադարձող քաղաքացիներով, փախստականների նոր հոսքերով, ինչպես նաև ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված օտարերկրյա քաղաքացիների ներգաղթով (ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով ապաստան հայցվողների թիվը ավելացել է 2022թ կազմելով՝ 950, իսկ 2021-ին՝ 260) [1]: Տարիների ընթացքում այս զարգացումներից յուրաքանչյուրը նպաստեց միգրացիոն քաղաքականության փոփոխությունների, կազմվեցին միգրացիոն հոսքերի պետական կարգավորման վերաբերյալ չորս հայեցակարգային փաստաթուղթ և ռազմավարություններ, 2 գործողությունների պլաններ, ինչպես նաև ստորագրվեցին մի շարք միջպետական և միջազգային համաձայնագրեր ու պայմանագրեր[2]:

Հայաստանի Հանրապետության բնակչության միգրացիայի կառավարման հայեցակարգը առաջին անգամ ընդունվեց 2000թ., որով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հիմք դրեց Հայաստանում միգրացիայի ոլորտի հիմնարար փաստաթղթերի (հայեցակարգերի, ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի) միջոցով կառավարմանը: 2000 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է չորս հայեցակարգ և ռազմավարություն ու երկու գործողությունների ծրագիր, որոնք սահմանել են միգրացիոն քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ելնելով այդ ժամանակաշրջանի միգրացիոն գործընթացների բնույթից և առկա հիմնախնդիրներից[3]:

Թվային տեխնոլոգիաները կարող են արդյունավետ գործիք լինել միգրացիան գրանցելու և վերահսկելու համար, հաշվի առնելով շարժվող մարդկանց լսարանի լայն ընդգրկվածությունը, տվյալների համախմբումը իրականացնել մի քանի թվային ռեսուրսներից:

Գիտական նորույթ: Բացահայտվել է միգրացիոն գործընթացների փոփոխությունները թվային փոխակերպումների համատեքստում, հիմնավորվել միգ-

---

[1] https://www.armstat.am/file/doc/99541178.pdf

[2] Կամավոր վերադարձի և վերաինտեգրման աջակցության համակարգի ներդրումը Հայաստանում, Կարիքների և բացերի գնահատման զեկույց, 2020 https://armenia.un.org/sites/default/files/2021-07/Setting-Up-System-of-AVRR-ARM.pdf

[3] **«Հայաստանի Հանրապետության Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»,** 20 մայիսի 2021 թվականի N 801-Լ, https://www.arlis.am/documentview.aspx?docID=155100

բացիոն գործընթացների կառավարման արդի մեխանիզմների ներդրումը՝ ելնելով միգրացիոն գործընթացների բնույթից ։

Եզրակացություն: Աշխարհում դեռևս որ մի պետություն չի կարողացել խուսափել միգրացիոն հոսքերից, ավելին շատերը ներդրել են կառավարման ժամանակակից մեխանիզմներ այդ հոսքերից դիվիդենտներ քաղելու նպատակով: Այս ամենից անմասն չէ նաև ՀՀ-ն: Հնդկաստանից, Իրանից քաղաքացիների ներհոսքը լավ առիթ է հասկանալու համար Հայաստանի միգրացիոն քաղաքականության «բացերը» և աշխատանքներ տանել դրանք վերացնելու ուղղությամբ: Հատկապես օրինական միգրացիայի արդյունավետ կազմակերպման նպատակով՝ կիրառության մեջ դնել թվային հարթակները: Շատ հաճախ անկանոն ներհոսքը լի ռիսկերով: Նախ և առաջ սրվում է աշխատաշուկայի բեռը՝ տեղի բնակիչները դառնում են գործազուրկ, իրենց աշխատանքը ավելի ցածր վարձատրությամբ զիջելով ներգաղթյալներին: ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հիմնական խնդիրը պետք է լինի այդ հոսքերի արդյունավետ կազմակերպումը: Նման խնդիրի առջև ՀՀ կանգնեց, ինչպես ռուս-ուկրաինական հակամարտության, այնպես էլ նաև 2023 սեպտեմբերին բռնի տեղահանված Արցախցիների դեպքում, որոնք ներկայումս աշխատաշուկայում ինտեգրվելու խնդիր ունեն: Թվային գործիքակազմի կիրառման արդյունքում հնարավոր եղավ արդյունավետ կազմակերպել չնախատեսված հոսքի հաշվառման գործընթացը:

Տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառումը հիմնարար նշանակություն ունի ինչպես միգրացիոն գործընթացների, այնպես էլ կառավարության կողմից միգրացիան կառավարելու կամ սահմանափակելու առումով:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 20 մայիսի 2021 թվականի N 801-Լ, https://www.arlis.am/documentview.aspx?docID=155100
2. Աշխատաշուկայի անհամապատասխանության եւ հմտությունների բացերի քարտեզագրման ելակետային հետազոտություն, Հայաստան, 2022, 80էջ, էջ 33
3. Կամավոր վերադարձի և վերաինտեգրման աջակցության համակարգի ներդրումը Հայաստանում, Կարիքների և բացերի գնահատման զեկույց, 2020 https://armenia.un.org/sites/default/files/2021-07/Setting-Up-System-of-AVRR-ARM.pdf
4. Հայաստանի Հանրապետություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, https://www.socservice.am/multilevel/ashkhatashvoukayi-iravitchaky-hayastani-hanrapetvouthyvounvoum
5. Շահրիմանյան Թ., Հայաստանի աշխատաշուկայի էթնիկ կազմի «վայրիվերումները», Ամբերդ 2023/4, էջ 52-60, https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/6.pdf

6. Волков Ю.Г., Кривопусков В.В., Курбатов В.И. Цифровые мигранты и цифровая диаспора: новые проблемы и тренды международной миграции. Цифровая социология/Digital Sociology. 2021;4(4):102-108. https://doi.org/10.26425/2658-347X-2021-4-4-102-108
7. Основной доклад по глобальной миграции 2022, 42С., стр. 6
8. Субетто А. И. Государственная политика качества высшего образования: концепция, механизмы, перспективы, СПб, Кострома: КГУ им. Н. А. Некрасова, Смольный университет РАО, Изд-во «Астерион», 2004., 136с, 11-13
9. Трегубова Н.Д., Иванова А.А. Радикализация мигрантов и экстремистский потенциал онлайн-ресурсов: Сравнительный анализ сетевых пространств взаимодействий мигрантов из стран СНГ в России, Коммуникации. Медиа. Дизайн, Том 5, №3, 2020, 145-167, стр. 148
10. Черевичко Т. В., Миграция труда в контексте цифровой экономики, Вестник СГСЭУ. 2019. № 4 (78), ISSN 1994-5094, стр 91
11. Alencar A., Refugee Integration and Social Media. A Local and Experiential Perspective. Information, Communication and Society, 2017, 21, 1588-1603
12. Cappelli, M., Digital Mobilization and Politicization of El Caminata del Migrante. Social Networking, **9**, 11-37. 2020, doi: 10.4236/sn.2020.92002., https://www.scirp.org/journal/paperinformation?paperid=101734
13. Engler Philipp, MacDonald Margaux, Piazza Roberto, Sher Galen, Migration to Advanced Economies Can Raise Growth, 2020, https://www.imf.org/ru/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth
14. Georgiou Myria, "City of Refuge or Digital Order? Refugee Recognition and the Digital Governmentality of Migration in the City". *Television & New Media*, 20 (6): 2019600–616.
15. Leurs K., Prabhakar M., Doing Digital Migration Studies: Methodological Considerations for an Emerging Research Focus, Chapter 14, 2018 https://library.oapen.org/bitstream/handle/20.500.12657/29754/10.1007_978-3-319-76861-8.pdf#page=253
16. Olga B. Skorodumova, Ibragim M. Melikov & Rufat S. Tabasaranskiy, «Problems of Migration Management in the Conditions of Global Digitalization of Society» International Conference on Electronic Governance and Open Society: Challenges in Eurasia EGOSE 2021: Electronic Governance and Open Society: Challenges in Eurasia pp 174–185, https://link.springer.com/chapter/10.1007/978-3-031-04238-6_14

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԸ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Շողեր Պյոտրի Պողոսյան

Համառոտագիր: Ընդհանուր առմամբ միգրացիան բնակչության տարածական տեղաշարժն է: Վերջին տարիներին ի հայտ են եկել միգրացիոն գործընթացների դրսևորման բազմաթիվ նոր ձևեր, որոնք առաջանում են միգրացիայի ավանդական ձևերի միահյուսման արդյունքում: Միաժամանակ, նոր ձևերի հետ մեկտեղ շարունակում են գոյություն ունենալ հները:

Թվային փոխակերպումները որպես տեղեկատվական դարաշրջանի արտահայտություն բնութագրվում են սոցիալական ցանցերում միգրանտների զանգվածային ներկայացվածությամբ, նրանց տեղեկատվական ինքնաներկայացմամբ և ինքնահիրացմամբ, ինչպես նաև անդրսահմանային տեղեկատվական տարածքներում միգրանտների սոցիալական հարմարվողականության նոր ձևերի մշակմամբ: Միգրացիան՝ որպես ձևավորվող նոր սոցիալական ինստիտուտ, որը ազդում է սոցիալական կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա, վերափոխվում է թվայնացման ազդեցության տակ: Սա ծնում է միգրացիայի կառավարման գործընթացներում փոփոխությունների և նորարարությունների սոցիալ-փիլիսոփայական վերլուծության անհրաժեշտությունը, ինչն էլ պայմանավորում է մեր ***հետազոտության արդիականությունը:***

Հետազոտության ***նպատակն է*** ուսումնասիրել՝ թվայնացման հետևանքները միգրացիայի կազմակերպչական ձևերի և միգրացիայի կառավարման գործընթացների վրա: Հետազոտության ***խնդիրն է*** ուսումնասիրել **միգրացիոն հոսքերը թվային փոխակերպումների համատեքստում** , միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարումը, վերլուծումը և համեմատումը:

Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են, պատմական, նկարագրական, համեմատական վերլուծությունների, վիճակագրական խմբավորումների մոտեցումները, միգրացիային առնչվող տարեկան զեկույցները, ինչպես նաև միգրացիոն գործընթացները լուսաբանող հեղինակային հրապարակումները:

Գիտական նորույթ: Բացահայտվել է միգրացիոն գործընթացների փոփոխությունները թվային փոխակերպումների համատեքստում, հիմնավորվել միգրացիոն գործընթացների կառավարման արդի մեխանիզմների ներդրումը՝ ելնելով միգրացիոն գործընթացների բնույթից :

Բանալի բառեր՝ միգրացիա, միգրացիոն գործընթացներ, թվային փոխակերպում զարգացում, աշխատուժ, վերապատրաստում, առաջընթաց,

МИГРАЦИОННЫЕ ПОТОКИ В КОНТЕКСТЕ ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ

Шогер Петровна Погосян

Аннотация: В целом миграция – это пространственное перемещение населения. В последние годы появилось множество новых форм проявления миграционных процессов, возникающих в результате переплетения традиционных форм миграции. При этом наряду с новыми формами продолжают существовать и старые.

Цифровые трансформации как выражение информационной эпохи характеризуются массовым представительством мигрантов в социальных сетях, их информационной самопрезентацией и самореализацией, а также развитием новых форм социальной адаптации мигрантов в трансграничных информационных пространствах. Миграция как новый социальный институт, затрагивающий многие аспекты общественной жизни, трансформируется под влиянием цифровизации. Это порождает необходимость социально-философского анализа изменений и инноваций в процессах управления миграцией, что обусловливает **актуальность** наших исследований.

Цель исследования – изучить влияние цифровизации на организационные формы миграции и процессы управления миграцией.

Задача исследования – изучение миграционных потоков в условиях цифровых трансформаций, эффективное управление миграционными процессами, анализ и сравнение.

Для сбора информации использовались исторический, описательный, сравнительный анализ, подходы статистической группировки, годовые отчеты, связанные с миграцией, а также авторские публикации, объясняющие миграционные процессы.

Научная новизна. Выявлены изменения миграционных процессов в условиях цифровых трансформаций, обосновано внедрение современных механизмов управления миграционными процессами, исходя из их.

Ключевые слова: миграция, миграционные процессы, цифровая трансформация, развитие, рабочая сила, обучение, прогресс

MIGRATION FLOWS IN THE CONTEXT OF DIGITAL TRANSFORMATION

Shogher Pyotr Poghosyan

Abstract. In general, migration is the spatial movement of the population. In recent years, many new manifestations of migration processes have appeared, which are byproducts of the interweaving of traditional forms of migration. At the same time, along with new forms, old ones continue to exist.

Digital transformations as an expression of the information era are characterized by the mass representation of migrants in social networks, their information self-presentation and self-realization, as well as the development of new forms of social adaptation of migrants in cross-border information spaces. Migration, as an emerging new social institution affecting many aspects of social life, is being transformed under the influence of digitalization. This raises the need for a socio-philosophical analysis of changes and innovations in migration management processes, which provides **the relevance** of this study.

The main goal of this research is to study the effects of digitalization on organizational forms of migration and migration management processes. **The objectives** of the study are: to study migration flows in the context of digital transformations, effective management of migration processes, analysis, and comparison.

The methods of historical, descriptive, comparative analyses and statistical groupings were implemented. Annual migration reports, as well as publications related to migration processes, were used for the information collection.

Scientific novelty: The changes in migration processes in the context of digital transformations were revealed, and the introduction of modern migration process management mechanisms based on the nature of migration phenomena was justified.

Keywords: migration, migration processes, digital transformation, development, workforce, training, progress,